

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՏԵՔՍԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ
(ԱՐՁԱԿ) ԽՈՍՔՈՒՄ

ՀՏԴ 801.7
DOI: 10.56246/18294480-2024.17-39

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՄԱԼՅԱ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող
Էլփոստ՝ amalyabarseghyan42@gmail.com

Հոդվածում քննվել է այն, որ արդի գեղարվեստական/արձակ/ խոսքը կապակցված ամբողջություն է, որն իրականանում է որոշակի միջոցներով՝ պայմանավորված նյութի ու մտահղացման ամբողջությամբ: Դրանք մեծ մասամբ ունեն վերնագիր, որ փոխադարձ կապի մեջ են բուն հենքի հետ՝ արտահայտելով հեղինակի հիմնական մտահղացումը, գաղափարը: Գեղարվեստական/արձակ/ խոսքի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի ոճով ու արտաքին իրադրությամբ պայմանավորված՝ այդ հարաբերությունների հարաբերիչ բառերով արտահայտությունը տարբեր է: Տարբեր է նաև նախադասությունների, պարբերությունների, հատվածների, մասերի կապերի սերտության աստիճանը, որն աստիճանաբար նվազում է՝ պայմանավորված նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

Մեր նպատակն է ցույց տալ արդի գեղարվեստական արձակ խոսքում ինչ ներդրատալիս կապակցության միջոցներ են օգտագործվում տեքստի մասերի կապակցության համար: Այդ կապերի բնույթը տարբեր է՝ պայմանավորված տեքստի նախադասությունների, պարբերությունների, հատվածների, գլուխների, մասերի կապակցության միջոցներով: Դրա վկայությունն է Ռ. Դավոյանի «Եթե Աստված կամենա», Ա. Աղաբաբյանի «Մենակը», Վ. Սահակյանի «Սև աչքեր, ճերմակ սփռոց» վեպերի, Ա. Պաչյանի «Ռոբինզոն», Ա. Շահվերդյանի «Գարնանային ռեքվիեմ» պատմվածքների տեքստերի կառուցման միջոցների քննությունը: Ցույց են տրվում շարահյուսական կապակցման միջոցների տարբերությունները կոնկրետ օրինակներով: Ուսումնասիրությունը կատարվում է ըստ կապակցման առանձին միջոցների ներկայացմամբ:

Բանալի բառեր՝ գեղարվեստական (արձակ) խոսք, հենք (տեքստ), ներդրատալիս միջոցներ, բառական միջոցներ, քերականական հարաբերություն արտահայտող բառեր, անվանում արտահայտող բառեր:

Ներածություն

Շարահյուսագիտության մեջ ընդունում են կապակցության չորս կարգի դրսևորում՝ կապակցության տեսակ, կապակցության բնույթ, կապակցության եղանակ, կապակցության միջոց:

Զահուկյանի կարծիքով. «Շարահյուսական կապակցության միջոցները երեք կարգի են՝ ներշարույթային, ներնախադասական և ներտեքստային: Ներտեքստային միջոցները նախադասությունների և ավելի բարձր միավորների տեքստի կազմում կապակցվելու միջոցներ են»¹:

Մեր նպատակն է ցույց տալ արդի գեղարվեստական արձակ խոսքում ինչ ներտեքստային կապակցության միջոցներ են օգտագործվում տեքստի մասերի կապակցության համար: Այս կապերի բնույթը տարբեր է. դրանք տեքստի նախադասությունների (առանձին, ինքնուրույն), պարբերությունների, հատվածների, գլուխների, մասերի կապակցության միջոցներ են: Կապ են ստեղծում նաև կրկնությունը, փոխարինումը, հարաբերիչների և հարաբերյալների որոշակի միջոցներ և այլն:

Գեղարվեստական խոսքը կապակցված ամբողջություն է, որն իրականանում է որոշակի միջոցներով ու եղանակներով՝ պայմանավորված նյութի ու մտահղացման ամբողջությամբ: Դրանք մեծ մասամբ ունեն վերնագիր, որ փոխադարձ կապի մեջ է բուն տեքստի հետ և արտահայտում է հեղինակի հիմնական մտահղացումը, գաղափարը: Այն ունի երկու պլան. մի պլանում խոսվում է տվյալ նյութի մասին, երկրորդ պլանում հանդես են գալիս տարբեր հանգամանքներով իրար հետ կապված հերոսներ, որոնք զանազան պատմություններ են անում: Հեղինակի ոճով և արտաքին իրադրությամբ պայմանավորված՝ այդ հարաբերությունների հարաբերիչ բառերով արտահայտությունը կարող է տարբեր լինել տեքստերում: Դրա վկայությունն է Ռ. Դավոյանի «Եթե Աստված կամենա», Ա. Աղաբաբյանի «Մենակը», Վ. Սահակյանի «Սև աչքեր, ճերմակ սփռոց» վեպերի, Ա. Պաշյանի «Դոքի՛նգոն», Ա. Շահվերդյանի «Գարնանային ռեքվիեմ» պատմվածքների տեքստերի կառուցման միջոցների քննությունը:

Այսպես՝ Ռ. Դավոյանի «Եթե Աստված կամենա» վեպն սկսվում է նախահենքով («Հղում ընթերցողին») և ավարտվում վերջահենքով («Վերջաբանի փոխաբեն») ու վերջահենքային բաղադրիչ բովանդակության ցանկով: Վեպում երկրորդաբար՝ որպես առմիջուկային բաղադրիչներ, հանդես են գալիս վերնագրերը, որոնց տեքստերի հատվածները տրոհված են աստղանիշ (***) կապերով:

Վ. Սահակյանի «Սև աչքեր, ճերմակ սփռոց» վեպն սկսվում է Վ. Վիսցկու և Վենեդիկտ Երոֆեևի առնախահենքային բնաբաններով: Վեպի տեքստերը ունեն միջակա վերնագրեր՝ թվական նշանակումներով, որոնք կազմում են նախորդ և հաջորդ տեքստերի բաղադրիչ մաս: Այսպես՝

«... արարք, որ կատարվեց

¹ Զահուկյան Գ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 86:

VI. օտար երկնքի ներքո

ուր ես կանգնած էի Սենթ Ուեն հրապարակում...» (էջ 65)

Ա. Պաշյանի «Ռոբինզոն»-ի պատմվածքներն սկսվում են նախահենքային բովանդակության ցանկով: Պատմվածքներն ունեն առնախահենքային վերնագրեր, որոնցից երեքը («թռչուններ», «ո՛ւր ես, Լյով», «շախմատային նովել») նաև առնախահենքային բնաբաններ: Պատմվածքների տեքստերի հատվածները տրոհված են աստղանիշ (***) կապերով:

Ա. Շահվերդյանի «Գարնանային ռեքվիեմ»-ի պատմվածքներն ունեն երկրորդաբարձր՝ որպես առմիջուկային բաղադրիչ, վերնագրեր ու վերջահենքային բաղադրիչներ բովանդակության ցանկ ու տեղեկություն գրքի վերաբերյալ, իսկ վերջինիս բովանդակության ու տպագրության վերաբերյալ տեղեկությունները տրված են առնախահենքային բաղադրիչներով:

Ինչպես տեսնում ենք, հեղինակից հեղինակ տեքստերի կառուցման միջոցները տարբեր են: Ամեն մի տեքստ ենթադրում է ինչպես նախադասությունների, այնպես էլ առանձին պարբերությունների միջև կապերի ստեղծում: Պարբերության բաղադրիչների իմաստային կապը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասությունների կապը: Բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, նույնպես նաև ցուցաբառերը՝ որպես ներհամահենքային (ներկոնտեքստային), հանդես են գալիս իրենց նշանակման գործառությամբ, այդպես և կրկնությունների ժամանակ փոխարինում չի կատարվում: Կրկնություն է նաև քերականական ժամանակաձևերի կրկնությունը:

Տեքստում պարբերությունները նույնպես կապվում են հատուկ միջոցներով, այսպես կոչված նախաբերիչներով և հետաբերիչներով. առաջինով հղում է կատարվում նախապես ասվածին (*վերոհիշյալ, վերևում նշվածը* և այլն), իսկ երկրորդի դեպքում հղում է կատարվում ասելիքին (*հետևյալը, ստորև բերվող* և այլն): Վերջիններս ներտեքստային կապակցության եղանակ են:

Գ. Զահուկյանը գրում է, որ «բուն տեքստային շաղկապների թիվը մեծ չէ՝ *այնուհետև, այնուամենայնիվ, ընդհակառակը, այսպիսով, արդ, այսուհանդերձ, վերջապես, վերջիվերջո, ընդամին* և այլն»¹:

«Կապակցական գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են: Սրանք կապում են գերնախադասական (գերֆրազային) միասնությունների ավելի մեծ հատվածներ, պարբերություններ և այս պլանով ձեռք են բերում ներտեքստային կապի (կոհեզիայի) կարգավիճակ»²:

Ներտեքստային կապակցման միջոցներ են³.

¹ Նույն տեղում, էջ 64:

² Гальперин И. Р., Текст как объект лингвистического исследования, М., 1981, էջ 78:

³ Աբրահամյան Ս., Հայոց լեզու. շարահյուսություն, Բուհական ձեռնարկ, Ե., 2004, էջ 240:

ա) Շաղկապներ և շաղկապական բառեր: Քերականական հարաբերություն արտահայտող բառեր են, որոնք, բացի բառեր ու նախադասություններ կապակցելուց, ունեն նաև ինքնուրույն նախադասություններ, պարբերություններ, հատվածներ և ավելի բարձր միավորների կապակցումներ տեքստում:

Ինքնուրույն նախադասություններ են կապակցում տեքստի հետևյալ օրինակներում.

«Դրա մեջ է կայանում բուն իմաստությունը (1): Թե չէ ինչ է ստացվում... համոզված եմ, որ նա իր խղճի հետ գործարքի մեջ չի եղել... (2) Ուրեմն էլ ինչու պիտի տառապանք ունենար (3)» (ՌԴ, էջ 346):

«Լուսաբացի թարմության միջով քայլում էր, չէ սահում էր թաց խոտերի վրայով (1): Ու ոտքը չէր հպվում գետնին (2): Անդունդի բերանին կանգ առավ (3): Նայեց ներքև. անհատակ մութ էր, սարսափազդու խավար (4): Բայց հանկարծ շուրջը մեկեն լուսավորվեց, դաշտի կանաչն արծաթափայլ հագավ (5)» (ԱԱ, էջ 65):

Բերենք այլ օրինակներ, որտեղ պարբերություններ են կապակցվում: Օր.՝ «Ջուրն իր ճանապարհը շարունակելու համար սահուն շրջանցում է իր առջև ընկած մեծ քարերը, փոքրերին տակովն է անում (1):

Այդուհանդերձ Արարիչն ամենահզոր ջուրն անգամ սահմանափակել է ցամաքով, ցամաքը՝ երկնամերձ լեռներով...» (ՌԴ, էջ 270):

«...Դու գողանում ես այդ խնայողությունները սերմացու գողացող մկան պես, թուփս գողացող աղվեսի պես (1):

Եվս մի կարևոր հանգամանք. Խիստ ցավալին այն է, որ այդ անչամիչ բույկիներն ուտում են նաև մեր երեխաները (1): Բացի այն, որ իրենք էլ են խաբվում, նաև ցավալի է, որ տեսնում ու սովորում են խաբել (2)» (ԱՇ, էջ 104):

բ) Միջանկյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ:

Սրանք վերաբերականների նման արտահայտում են խոսողի տրամադրությունը (հաստատում, ժխտում, երկբայում, բացատրություն, իմաստային հավելում և այլն) նախորդ նախադասության կամ նախադասությունների ասվածի նկատմամբ՝ կատարելով կապակցական դեր: Օրինակ՝ «Հայտնի է, որ աշխարհի շատ քաղաքներում կան հուշարձաններ, որոնք կանգնեցվել են այս կամ այն հերոս կենդանու պատվին (1):

Այդ հուշարձանները խորհրդանշում են տվյալ կենդանու որևէ սխրանքը, պատմական իրադարձությունների (հիմնականում համաշխարհային պատերազմների) թոհուրոհի մեջ նրա ունեցած դերը» (ԱՇ, էջ 87):

Կապակցական ուժեղ կապեր են ստեղծում միջանկյալ նախադասությունները: Ինչպես՝ «Լռություն էր (1): Ուզում էի ծիծաղս պահել, բայց սկսեցի ծիծաղել մտքիս մեջ (հետո կպատմեմ, թե ինչու), պարապել էի, պրկվում էի ողջ մարմնով» (ԱՊ, էջ 137):

գ) Մեջբերվող ուղղակի խոսք: Մեջբերվող ուղղակի խոսք ներմուծելիս փոխվում են հաղորդման կողմերը, կարող են փոխվել պարբերության համար բնորոշ

կապակցության միջոցներն ու եղանակները, և պարբերության մեջ ներդրվել ուրիշ հաղորդմանը հատուկ միջոցներն ու եղանակները: Ինչպես հեղինակային ընդմիջարկումները, ուրիշ հեղինակներից կատարված մեջբերումները, օրինակները, հերոսների մտքերը, ուրիշների հաղորդումների վերարտադրությունը:

Մեջբերվող ուղղակի խոսքով նախադասությունը ստորադասական հարաբերության մեջ է գտնվում հեղինակային նախադասության հետ, սակայն այդ կապն ու հարաբերությունը պակաս սերտ է, քան բարդ ստորադասական նախադասության:

Գեղարվեստական խոսքում մեջբերվող ուղղակի խոսքը, հատկապես երկխոսություններում, սկսվում է նոր տողից գծով (–), իսկ միջադաս ու վերջադաս հեղինակային խոսքից տրոհվում է ստորակետ գծով (–): Այսպես՝

Երեկոյան Սարոյանը զանգահարեց Կորոյովին.

– Սերգեյ Պավլովիչ...– Առնոն չհասցրեց ո՛չ բարևել, ո՛չ էլ ներկայանալ, խոսքը բերանում Կորոյովն ընդհատեց.

– Առնո՛ւ Լվովիչ, իսկ ես Ձեր զանգին սպասում էի հինգ օր հետո:

– Սերգեյ Պավլովիչ, իսկ ինձ թվում է՝ Դուք երեկվանից հեռախոսի մոտից չեք հեռացել:

Կորոյովն ընկալուչի մեջ քահ-քահ ծիծաղեց.

– Այդպես էլ կա, Սարոյան:

– Խնդրում եմ ինքնաթիռ և կոնտեյներ ուղարկե՛ք՝ «Ալֆա-1-ը» տեղափոխելու,– ասաց Առնոն:

– Վաղն առավոտյան ինքնաթիռը ձեր մայրաքաղաքում կլինի... (ԱԱ, էջ 38):

Հարցուպատասխանական այս ամբողջ հատվածը երկխոսության մեջբերվող ուղղակի խոսքի տեքստային միավորների փոխհաջորդման լավագույն օրինակ է «Մենակը» վեպում:

գ) Անվանում արտահայտող բառեր (գոյականներ, ածականներ, մակբայներ, թվականներ, բայեր), որոնք խոսքի մեջ անվանում են նշված անձը, առարկան, երևույթը և դրանով կապ ստեղծում տվյալ և մյուս նախադասությունների միջև: Անվանում արտահայտող բառերը նախադասության մեջ ունեն նաև շարահյուսական դեր:

Կապակցական դեր կատարող գոյականով հաճախ մասնավորվում է նախապես ասվածը՝ ընդհանուր հասկացությունը, կամ կատարվում հակառակ երևույթը: Այսպես՝ «Կեսօրին Զիկատարի տիեզերական կենտրոն եկան սպասված *հյուրերը*» (1):

«Մուտքի մոտ Սարոյանն ընդունեց *Ալիսանյանին* ու *Արցիմովիչին* (2)» (ԱԱ, էջ 137):

«Նա բացեց *արկղը*՝ փակ աչքերով շունչը պահած... (1) Արկղի մեջ շերտ առ շերտ դարսված էին բոլոր այն *խաղալիքներն* ու *փայլերը*, որ ամեն տարի զարդարում էին ամանորյա տոնածառը (ԱՊ, էջ 110):

«Սարոյանը գծեց աստղադիտարանի տեղը և մատիտը հանձնեց Կորոյովին (1): Նա գնացքի նույն տեղում գրեց Սարոյանի Աստղադիտարան (2):

Հետագայում *գծագրի* վրա մեծ փոփոխություններ արվեցին, բայց *Սարոյանի* նշումները մնացին *նույն տեղում*, առանց փոփոխության (1): Պահպանվել էին նույնիսկ մասշտաբները (2):

Սարոյանն աստղադիտարանն անվանեց «Ալֆա-1» (1): Կորոյովն ուշադիր զննելով *աստղադիտարանի* մակետը՝ համոզվեց, որ *Սարոյանն* արդեն պատկերացում ունի աստղադիտակի (տելեսկոպի) չափերի ու քաշի մասին» (ԱԱ, էջ 31):

Կապակցում է կատարվում նաև գոյականների և դերանվանական կապակցության միջոցով՝ կրկնության եղանակով:

Հաճախ հատուկ անունով անձը կամ առարկան կարող են բնութագրվել հասարակ անունով՝ շրջաստությամբ դառնալով կապակցման միջոց նախադասությունների միջև:

Կարող է նաև հասարակ անունով գոյականը շրջաստությամբ բնութագրվել հատուկ անունով՝ կապ ստեղծելով նախադասությունների և պարբերությունների միջև¹:

Այսպես, «Քերիմովը *Վասիլի Միշինին* հրավիրեց սուրճի (1): Ակնհայտորեն նրան հետաքրքրում էր *Առնո Սարոյանի* անձը (2): Գլխավոր *կոնսպրուկտորին* մտերմաբար խնդրեց պատմել *պրոֆեսորի* մասին (3)» (ԱԱ, էջ 198):

Ածականը կապակցական դեր կատարելիս հաճախ հանդես է գալիս գոյականի հետ միասին՝ բնութագրելով նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ նկարագրված անձը, առարկան, երևույթն և այլն: Օրինակ՝ «Պայմանավորված ժամին եկավ Բոլդիրևը (1): Հզոր, *պարկառու* Գրիգորի Գրիգորիչից ոչինչ չէր մնացել (2)» (ԱԱ, էջ 24):

«Վերմակի տակից տղան մի մեծ *թիթեռ* հանեց, որին սպանել էր երեկոյան՝ պատուհանի գոգին (1): *Անտառային երկրաչափ* էր՝ *տգեղ, համարյա սև* (2)» (ԱՊ, էջ 150):

Բայի դիմավոր ձևերը կապակցող դերով քիչ են գործածվում: Կապակցական դեր են կատարում դերբայական ձևերը, հատկապես հարակատար, ենթակայական, անորոշ դերբայները: Օրինակ՝ «Այլևս ղեկավարները *չեն որոշում* վերևներում (1): *Որոշողը* քո կողքին է, ում համար ոչ մեկի խոսքը արժեք չունի (2)» (ԱԱ, էջ 205):

Հանդիպում են բայի դիմավոր ձևերի, անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի, բայի քերականական ժամանակաձևերի կապակցումներ՝ կրկնության եղանակով: Այսպես՝ «Մյուս օրն *անցկացրի* տանը (1): *Անցկացրի* միայն գրելով... (2) *Գրում էի* ու *գրում...* (3) Բանաստեղծություններ *էի գրում* սև աչքերի մասին... (4) *Գրում էի*, որ երեկոյան կարդամ... (5) հեռախոսով. Երբ կզանգի... (6)» (ՎՍ, էջ 173):

«Գինին ամբողջությամբ *պարպում* եմ ներս...

Պարպում եմ... Վերջ... Ահա և *պարպեցի*: *Պարպեցի...*» (ՎՍ, էջ 200):

¹ Նույն տեղում, էջ 247:

«Ես սթափ եմ...

Սթափ եմ ու հենց հիմա» (ՎՍ, էջ 209):

Մակբայները ևս հանդես են գալիս կապակցական դերով՝ իրենց տարբեր իմաստներով (ժամանակ, տեղ, ձև, չափ և այլն), կապ են ստեղծում տվյալ և նախորդ նախադասությունների միջև: Օրինակ՝ «Մի քանի շտկումներ արեց (1): *Նորից* կարդաց (2): *Նորից* շտկեց (3)»:

Թվականով կապակցված նախադասությունները կամ պարբերությունները թվարկմանը նախորդողի նկատմամբ գտնվում են մասնավորման կամ ընդհանրացման հարաբերության մեջ: Մասնավորման հարաբերության ձևավորման մեջ կարևոր դեր ունեն թվարկման արժեք ունեցող դասական թվականները:

Այսպես՝ «—Հարգելիներս,— ակնոցն ուղղելով ասաց Սարոյանը,— իսկ այժմ ուշադիր լսեցե՛ք ինձ և ձեզ մոտ գրառումներ արե՛ք (1):

Առաջին՝ ոչ մի պարապմունք դադիճում չախտի լինի, բոլոր վարժանքները անցկացվելու են միմիայն տիեզերանավի աստղադիտարանի վրա (2):

Երկրորդ՝ տիեզերագնացների *պարապմունքների* ժամերը փոխել, կաշխատեք կեսօրից հետո մինչև կեսգիշեր (3):

Երրորդ՝ ես իմ օգնականների և ձեր խմբի հետ, ընկեր Ֆիոլետով, *տիեզերանավով* ու *աստղադիտարանով* կգբաղվեմ առավոտից մինչև կեսօր (4)» (ԱԱ, 200–201):

Կամ՝ Կելդիշը *երկու* բացառություն էր թույլ տվել (1): *Առաջինը* ԱՄՆ-ից վերադարձած լեգենդար ակադեմիկոս Կապիցան էր, *երկրորդը՝* Սամսոնովը (2):

Դերանունները նշանակում են առարկաներ, առարկաների և երևույթների հատկություններ իրադրությունից կախված: Գ. Զահուկյանը նկատում է. «Դերանունը որպես կապակցող բառ երկու գործառույթ ունի՝

Առաջինը ըստ էության իրադրական, երկրորդը՝ կոնտեքստային, իրադրական: Առաջին դեպքում նրանց նշանակությունը համապատասխանում է անմիջական ակտին, երկրորդ դեպքում հանդիսանում է նշանների նշան՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը, նույնպես կապված իրականության հետ միջնորդավորված ուրիշ լեզվական միավորի միջոցով»¹: Բերե՛նք օրինակներ, որտեղ կապակցումը կատարվում է դերանուններով՝ փոխարինման գործառույթով.

«*Սխալը* հրթիռի դինամիկայի մեջ էր (1): *Դա* թիվ չէ, որ մատդ վրան դնես, գիժ չէ, որ ցույց տաս, դա տրամաբանություն է, հիմնական գաղափարը (2)» (ԱԱ, էջ 213):

«Մոտեցա պատուհանին (1): Հատուկենտ մեքենաներ և առավոտ շուտ գործի գնացող մի քանի հետիոտներ էին անցնում... (2): Օ՛հ, որքան նախանձեցի ես նրանց այդ պահին...(3):

¹ Джаукян Г. Б., Универсальная теория языка, М., 1999, էջ 203:

Նրանց ոչինչ չէր պատահել, ոչ մղձավանջային գիշեր, ոչինչ (1): Նրանք ոչ մի դիվային նվերներ չէին ստացել, ու նրանց ոչ մի ահավոր բան չէր սպասվում... (2)» (ՎՍ, էջ 65):

Եզրակացություն

Արդի գեղարվեստական խոսքը (արձակ) կապակցված ամբողջություն է, որն իրականանում է որոշակի միջոցներով՝ պայմանավորված նյութի ու մտահղացման ամբողջությամբ: Դրանք մեծ մասամբ ունեն վերնագիր, որ փոխադարձ կապի մեջ են բուն հենքի (տեքստի) հետ՝ արտահայտելով հեղինակի հիմնական մտահղացումը, գաղափարը: Գեղարվեստական խոսքի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի ոճով և արտաքին իրադրությամբ պայմանավորված՝ այդ հարաբերությունների հարաբերիչ բառերով արտահայտությունը բազմազան է: Տարբեր է նաև նախադասությունների, պարբերությունների, հատվածների, մասերի կապերի սերտությունը, որն աստիճանաբար նվազում է՝ պայմանավորված նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

Համառոտագրություններ

- ՌԴ – Ռազմիկ Դավոյան, Եթե Աստված կամենա, Ե., 2008, 528 էջ:
ԱԱ – Աշոտ Աղաբաբյան, Մենակը, Ե., 2017, 320 էջ:
ՎՍ – Վահրամ Սահակյան, Սև աչքեր, ճերմակ սփռոց, Ե., 2004, 222 էջ:
ԱՊ – Արամ Պաչյան, Ռոբինզոն, Ե., 2019, 163 էջ:
ԱՇ – Առլեն Շահվերդյան, Գարնանային ռեքվիեմ, Ե., 2016, 148 էջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Զահուկյան Գ. Բ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003:
2. Արրահամյան Ս. Գ., Հայոց լեզու. շարահյուսություն, Բուհական ձեռնարկ, Ե., 2004:
3. Джаукян Г. Б., Универсальная теория языка, М., 1999.
4. Гальперин И. Р., Текст как объект лингвистического исследования, М., 1981.

INTEXTUAL MEANS OF CONNECTION IN MODERN LITERARY SPEECH /PROSE/

BARSEGHYAN AMALYA

PhD in Philology

Senior Researcher at the Language Institute after

Hr. Acharyan, NASRA

e-mail: amalyabarseghyan42@gmail.com

The modern literary speech /prose/ is a coherent whole, which is realized by definite means. As a rule works mostly have titles, which are connected by each other with basic text, expressing author's main thinking and idea. The analysis of means of intertextual communication in artistic speech shows that the expression of these connections and the interrelationship of words vary depending on the author's style and external context. At the same time, there is a tendency to weaken the connections between sentences, paragraphs and parts of the text, which is explained by the increase in the independence of individual sentences.

Our goal is to demonstrate the intertextual connection methods used in contemporary literary prose to link various parts of the text. The nature of these connections varies, depending on the means of linking sentences, paragraphs, sections, chapters, and parts of the text. Evidence of this can be found in the analysis of the construction techniques of the texts in R. Davoyan's "If God Wanted", A. Aghababyan's "Alone", V. Sahakyan's "Black Eyes, White Sheets", A. Pachyan's "Robinson," and A. Shahverdyan's "Spring Requiem." The differences in syntactic linking methods are illustrated with specific examples. The study is conducted by presenting individual means of connection.

Keywords: *literary speech /prose/, basic /text/, intratextual meanings, word meanings, words expressing grammatical relationship, words expressing names.*

СРЕДСТВА ВНУТРИТЕКСТОВЫХ СВЯЗЕЙ В СОВРЕМЕННОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ/ПРОЗА/

БАРСЕГЯН АМАЛИЯ

Кандидат филологических наук

Старший научный сотрудник

Института языка имени Р. Ачаряна НАН РА

электронная почта: amalyabarseghyan42@gmail.com

Современная художественная речь (проза) представляет собой связанное целое, формируемое с использованием определённых средств, которые обеспечивают полноту содержания и выразительность идеи. Как правило, произведения имеют заглавие, тесно связанное с основным текстом и отражающее ключевую мысль или авторскую концепцию. Анализ средств внутритекстовой связи в художественной речи показывает, что выражение этих связей и взаимосвязь слов варьируются в зависимости от авторского стиля и внешнего контекста. При этом отмечается

тенденция к ослаблению связей между предложениями, абзацами и частями текста, что объясняется возрастанием независимости отдельных предложений.

Наша цель — выявить, какие средства внутритекстовой связи используются в современном художественном прозаическом языке для объединения частей текста. Эти связи различаются в зависимости от способов соединения предложений, абзацев, фрагментов, глав и крупных частей текста. Это подтверждается анализом структурных особенностей текстов таких произведений, как романы Р. Давояна «Если Бог пожелает», А. Агабабяна «Одиночество», В. Сахакяна «Чёрные глаза, белая скатерть», а также рассказов А. Пачяна «Робинзон» и А. Шахвердяна «Весенний реквием». Далее будут рассмотрены различия между способами синтаксической связи с примерами. Исследование проводится с представлением отдельных средств связи.

Ключевые слова: художественная речь/проза/, базовый текст, внутритекстовые ресурсы, слова выражающие грамматическую связь, слова обозначающие имена.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.05.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 18.05.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: